Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.Լ.
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
0010,Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail-ashotmanukyan7@gmail.com

Հոդվածում քննարկվում են համաշխարհային տնտեսական գործընթացներով պայմանավորված փոխակերպվող հասարակության ընտանեկան դաստիարակության խնդիրների առաջացման պատճառներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

Բանալի բառեր. *Ընտանեկան դաստիարակություն, ընտանիք, գլոբալացում, շուկայական հարաբերություններ, դաստիարակչական համակարգ, հաղորդակցում, սոցիալականացում:*

Ներկայացված է խմբագրություն 27. 04. 2018

Քաղաքական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վերափոխումներով պայմանավորված հասարակական փոխակերպումներն անդրադառնում են ընտանեկան կառույցների բնականոն զարգացման գործընթացի վրա և նոր խնդիրներ են առաջադրում մանկավարժական գիտությանը՝ ուսումնասիրելու գլոբալացման ազդեցությունները կրթադաստիարակչական գործընթացի վրա:

Համամոլորակային տնտեսական զարգացումների հետևանքով պայմանավորված՝ ի հայտ են գալիս մշակութային փոփոխություններ՝ իրենց դրական և բացասական հետևանքներով: Առևտրի աճն ակտիվացնում է մարդկանց լայնածավալ տեղաշարժերի գործընթացը հայրենիքից դեպի ավելի զարգացած աշխատաշուկա ունեցող պետություններ: Շուկայական գործընթացներն առաջացնում են պատմականորեն ձևավորված ավանդական էթնոկրոնական կենսատարածքների և պետական կառույցների օրենսդրության փոփոխություններ: Համայն մարդկությանը հասանելի են դարձել զանգվածային լրատվության միջոցներն՝ իրենց դրական ու բացասական հետևանքներով: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների բուռն զարգացումների և ներդրումների շնորհիվ հաղթահարելի է դարձել ժողովուրդների միջև նախկին մեկուսացվածությունը: Համացանցային լրատվությունը հեղեղված է ոչ միայն ազգային, այլև ապազգային և նույնիսկ հակամարդկային բնույթի քարոզչական նյութերով: Եզակի չեն ընտանեկան, պետական արժեքների ոտնահարումը, մայրենի լեզվի աղավաղումն ու ազգային ինքնության ստորադասումը գլոբալ ինքնությանը: «Դա ազդում է մարդու հոգևոր նկարագրի վրա, և նա ենթարկվում է արտաքին չկառավարվող գործոնների» [1, էջ 125]: Անցյալ դարավերջին ծնված ու անկասելիորեն զարգացող համացանցն իր իր չվերահսկվող տեղեկատվական ծավալներով իրական մարտահրավեր է աճող սերնդի դաստիարակությամբ մտահոգվողների համար: Ռ. Բարնետը և Ջ. Կավանաղին գրում են. «Ամբողջ

աշխարհում վերջերս դիտվող միտումները՝ տեխնոլոգիական առաջընթացը, մասնավորեցումը, վերափոխումը և էլեկտրոնային լրատվամիջոցների ներխուժումը առևտրային ոլորտ, ավելի է բարդացնում ծնողների և մանկավարժների հաղորդակցման մրցունակությունը գլոբալ-տեղեկատվական ցանցերից երիտասարդության ուշադրությունը գրավելու խնդրում» [2, էջ 279]: Ըստ Կ. Վրիզասի և Մ. Ցիտուրիդուի՝ «Մշակույթը, տեխնոլոգիաները և կրթությունը սերտորեն կապված են» [3]: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն առաջնահերթ է դարձնում աճող սերնդի սոցիալ-մշակութային անվտանգությունն ապահովելու ու բարոյական դաստիարակությունն արդյունավետ իրականացնելու հիմնախնդիրը:

Այս գործընթացների արդյունքում այսօր փոփոխության է ենթարկվում պետության նախնական միավորի՝ ընտանիքի նկարագիրը, որը երեխայի կայացման կենսասոցիալական կառույցն է: Պայմանավորված նյութատնտեսական հիմքով և աշխատանքային պայմաններով՝ ընտանիքներն աստիճանաբար փոքրանում են իրենց քանակական կազմով: Ընտանիք կազմող երիտասարդներն ապրում են ոչ միայն պապիկից ու տատիկից կտրված, այլև ծնողներից: Արդյունքում խախտվում է սերունդների միջև անմիջական կապը, և ծնողական հոգատար վերաբերմունքից զրկված երիտասարդ սերունդն ավելի խոցելի է դառնում արտաընտանեկան բարոյահոգեբանական ագրեսիվ ազդեցությունների համար:

Պայմանավորված ամուսինների կենսակերպով՝ ընտանիքներում խստորեն սահմանափակվում է երեխաների քանակը կամ հետաձգվում է մանկածնության բնական գործընթացը: Արհեստականորեն վերափոխվում է ընտանիքի սեռային կազմը, լայնորեն տարածված է պտղի՝ սեռային պատկանելությամբ պայմանավորված հղիության ընդհատումը, խախտվում են կենսաէթիկայի օրենքները, երեխաների բնականոն պատկերացումները սեռերի հավասար իրավունքների վերաբերյալ, առաջանում են գերարժևորման կամ թերարժեքության բարդույթներ: «Քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում այլափոխվում, աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը. ընտանեկան դաստիարակության, ընտանեկան առողջ հարաբերությունների ձևավորման հիմնախնդիրը դառնում է արդիական» [1, էջ 129]: Առաջանում են հակասություններ ընտանեկան դաստիարակության գործընթացում: Ծնողներից ոմանք, փորձելով ապահովել իրենց երեխաների սոցիալական կենսունակությունը, երկրորդական պլան են մղում իրենց իսկ մայրենի լեզուն, նախնիներից ժառանգած բարոյական արժեքները և օտարամոլության հովերով տարված՝ հարազատ երեխային դիմազրկում են՝ վերածելով մարդկային հումքի: Տնտեսական գործընթացների փոփոխությունների արդյունքում գումար վաստակելու համար ամուսիններից մեկի արտագաղթն այլ երկիր վտանգում է ընտանիքի՝ որպես սոցիալական միավորի կենսագործությունը: Պայմանավորված զարգացած երկրների աշխատաշուկայի զարգացումներով՝ գումար վաստակելու նպատակով հայրենիքից հեռանում են նաև կանայք: Այսօրվա փոխակերպվող հասարակության մեջ ավելանում են ապահարզանները, միայնակ մայրերը, թերի ընտանիքները, ծնողազուրկ երեխաները: Ընտանիքի նկարագրի փոփոխությունները փոփոխություններ են թելադրում նաև ընտանեկան ներդաշնակ դաստիարակության գործընթացում: Ակնհայտ է, որ ընտանիքի կյանքի որակը, նրանում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը կարող են ոչ միայն դրական, այլև բացասական ազդեցություն գործել երեխայի դաստիարակության վրա: Եթե

նախկինում երիտասարդ ծնողներն աշխատում էին, իսկ երեխաների դաստիարակությամբ շարունակում էին զբաղվել միևնույն ընտանեկան հարկի տակ գտնվող պապիկը, տատիկը կամ այլ ազգականներ, ապա այսօր վերջիններիս կողմից երեխաների դաստիարակությամբ զբաղվելը գրեթե անհնար է դարձել. դանդաղում և ձևախեղվում է երեխայի սոցիալականացումը: Ընտանիքի քայքայումը հրահրում է գերդաստանի, տոհմի և ամբողջ էթնոհանրության քայքայումը, որովհետև սոցիալական պայմաններով և կենսակերպով պայմանավորված՝ միմյանցից հեռանում են ազգականները, խաթարվում են ազգակցական հարաբերությունները: Մանկավարժական տեսանկյունից խնդրահարույց է այն դաստիարակությունը, որ տալիս են միայնակ, ապահարզանի մեջ գտնվող և երեխայի հետ դեպքից դեպք հանդիպող ծնողները: Երեխաների ընտանեկան դաստիարակության վրա անդառնալիորեն են ազդում նաև ընտանեկան կյանքի բացասական օրինակներին առնչվելը:

ՀՀ-ը տարածաշրջանային կամ տնտեսաքաղաքական ինչ դաշինքի կազմում էլ լինի, որպես միջազգային համագործակցության սուբյեկտ չի կարող խուսափել համաշխարհային գործընթացների ազդեցությունից: Այդ իրողությունը թելադրում է մշակել ընտանեկան դաստիարակության ժամանակակից պահանջներին բավարարող մեթոդաբանություն էթնոակունքների և միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա: Հայ ազգի ինքնապահպանման միջոց եղել և մնում է մշակույթի մեջ ամրակայված ժողովրդական մանկավարժությունը: Փոխակերպվող հասարակության մեջ կարևոր է էթնոմանկավարժական մշակույթի ուսումնասիրությունը՝ լիարժեք էթնոկիրների դաստիարակության գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու համար: «Մշակույթի համակարգերում անհատի դերի հետազոտումն անհրաժեշտ է նրա գործունեության կարգավորման, մշակույթի մարդկայնացման, հասարակության բնականոն գործառույթների իրականացման և բնության հետ փոխգործողությունների հնարավոր խախտումների բացահայտման համար» [4, էջ 36]:

Ռուսաստանի Դաշնությունում, Հարավային Կորեայում և Բրազիլիայում ճապոներենի դասավանդման փորձը ցույց է տվել, որ 1979 թվականից մինչ 2012թվականն ընկած ժամանակահատվածում այդ լեզուն դասավանդողների թիվն աճել է 15,6 անգամ. 2010թ-ին ճապոներեն ուսումնասիրող օտարերկրացիների թիվը կազմել է 375 000, իսկ ֆրանսերենը՝ 25000 [6]: ԱՄՆ կառավարության տվյալների համաձայն՝ 1600 կրթական հաստատություններ իրենց ուսումնական պլաններում ներառել են չինարենը. դպրոցներից դուրս են մղվում գերմաներենը, ֆրանսերենը, ռուսերենը [7]: Կարելի է հավաստել, որ տվյալ դեպքում օտար մշակութային արժեքների հետ հաղորդակցման դրդապատճառը ոչ թե օտարամոլությունն է, այլ ավելի շարժունակ զարգացում ունեցող հասարակության մշակութային արժեքների հետ հաղորդակցվելու կենսական անհրաժեշտությունը: Փաստորեն գլոբալացումն օգնում է ազգային տնտեսությունը գիտականորեն ճիշտ կառուցող և իրենց էթնոմշակաթային ավանդական կենսաձևը պահպանող ժողովուրդներին: Իրենց էթնոմշակութային հիմքն ամրացնող ժողովուրդները փոփոխություններ են առաջացնում նույնիսկ ամերիկյան գերտերության այսօրվա կրթական միջավայրում և սկզբնավորում իրենց ազգային դիմագծի կայուն տեղը նրա վաղվա մշակութային նկարագրում:

Ղ. Աղայանը գրել է. «Մեր նախնիք իրանց աննշան ուսումով մեծամեծ հարստություններ էին դիզում, բայց մենք այժմ պատրաստում ենք այնպիսի անձինք,

որոնք վատնելու առավել ընդունակ են, քան թե շահելու իրանց հայրական ժառանգությունը» [8, էջ25]: Փաստորեն ազգային-ընտանեկան դաստիարակության արդյունավետության չափանիշ է սոցիալ-տնտեսական հարափոփոխ իրավիճակներում հարազատ հանրությունը պաշտպանելու կարողությունը: Էթնոպետական կազմավորում չունեցող, բայց ընտանեկան դաստիարակություն ստացած հայկազյանները նոր սերունդների բնականոն զարգացումն ապահովելու համար ստեղծեցին մշակութային հիմք (օրինակ՝ «Գիրք դատաստանի»-ն և «Որոգայթ փառացը») և կարողացան հարյուր տարի առաջ վերականգնել պետականությունը: Առևտրատնտեսական գործընթացների ժամանակաշրջանում դրված է փոքրաքանակ ազգերի ինքնապահպանման խնդիրը: Եթե նախնադարում մարդն իր երեխային դաստիարակում էր այնպես, որ նա պարզունակորեն ծանոթ լինի մերձակա միջավայրին, կարողանա որս անել և կենսական գիտելիքների կիրառմամբ դիմակայել բնության արհավիրքներին, ապա ժամանակակից աշխարհաքաղաքական տեղաշարժերում հայտնված մարդը փորձում է դաստիարակել այնպիսի սերունդ, որը, կյանք մտնելով, կարողանա իր տեղը գտնել զարգացող համաշխարհային տնտեսակարգի մի մասը կազմող ազգային տնտեսությունում և իր կենսասոցիալական գոյությունն ապահովելու համար բարձակարգ տեխնոլոգիական միջոցներով շարունակի Տիեզերքի ուսումնասիրությունն ու յուրացումը: Համամարդկային տնտեսության արագացած զարգացումը բնապահպանական խնդիրներ է դնում ամբողջ մարդկության առաջ, որն այսօր վերածվում է մի մեծ ընտանիքի: Արդյունքում ստացվում է, որ նախնական՝ միջուկային և համամարդկային ընտանիքի պահպանումը մարդկային հասարակության գոյատևման և զարգացման համար վերածվել է կենսապահովման ինքնապաշտպանական միջոցի: Ընտանեկան դաստիարակությունն արժևորվում է ոչ միայն էթնոհանրությունների, այլև համամարդկային հանրության համար: Այստեղից բխում է փոխակերպվող հայ հասարակության համար առաջնահերթություն ունեցող ընտանեկան դաստիարակության խնդիրը՝ դաստիարակել համամոլորակային տնտեսական մարտահրավերներին դիմակայող, կենսունակ և իր ազգային դիմագիծը անխաթար պահող սերունդ:

«Ընտանիքի էթնոմանկավարժական գործառույթներն արտահայտվում են նրանով, որ ներընտանեկան հաղորդակցման ընթացքում ավագ սերնդի կյանքի փորձը, նրա մշակութային զարգացվածության աստիճանը, վարքի կարծրատիպերը, օրինակները, բարոյական պատկերացումները, նորմերը, ընտանեկան ավանդույթները հաղորդվում են հաջորդ սերնդին» [1, էջ 112]: Այս խնդիրի լուծումով է պայմանավորված հայ ազգային անվտանգության ապահովումը, ուստի օրախնդիր է, որ մեր նախնիներից ժառանգած մշակույթը հաղթահարի հասարակության փոխակերպումների արդյունքում առաջացած դժվարությունները համամոլորակային բազմամշակութային ոլորտում և շարունակի մնալ համամարդկային հոգևոր հարստության մասը: Աճող սերունդը պետք է դաստիարակվի գիտատեխնիկական առաջընթացն ապահովելու և դրանց կառավարման ուղղությամբ մարդկության առաջ պատասխանատվության ունակությամբ: Այդպես մեր ազգային էպոսի հերոսներն են պաշտպանում իրենց ժողովրդին և համայն մարդկությանը: «Սիրենք մեր ազգը, որով և սիրած կլինենք և մարդկությունը. պատվենք մարդկությունը և ուսանինք նրանցից սիրել մեր ազգը»,- գրում է Ղ. Աղայանը [8, էջ 49]: Նմանօրինակ մոտեցման արդյունքում համամոլորակային գործընթացներում ընդգրկված մարդկության մի մաս կազմող

հայ ժողովուրդը կունենա սերունդ, որը կպաշտպանի իր ազգային և համամարդկային արժեքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էթնոմանկավարժություն: Ուսումնական ուղեցույց/Կազմ.՝ Գ. Հակոբյան. -Եր.: Արտագերս, 2015, -152 էջ:
2. «Le procés de la mondialisation».-Paris, Fayard 2001, -489p.:
3. «Technologie, culture et éducation» էջ 21, էլ.հասցե՝ https://ru.calameo.Com /books/0009738093d8b476a2f0d
4. Դոլուխանյան Վ.Ա. «Մշակույթ, անձ և համահաղորդում» -Եր.: «Հայաստան», 1985, -169 էջ:
5. «Языки мира», էլ. հասցե՝ http://teach-learn.narod.ru/languages.htm
6. «Язык как средство взаимодействия в международном образовательном пространстве (из опыта преподавания японского языка в России, Южной Корее и Бразилии)» Էլ. հասցե՝ http://www.myshared.ru/slide/903980/
7. «Китайский язык становится вторым иностранным языком в США», էլ. հասցե՝ http://russian.people.com.cn/31517/6915413.html
8. Աղայան Ղազարոս, Երկերի ժողովածու, հատոր 4, -Եր.: «Հայպետհրատ» 1963, 684 էջ:

РЕЗЮМЕ
ОСОБЕННОСТИ СЕМЕЙНОГО ВОСПИТАНИЯ В МЕНЯЮЩЕМСЯ ОБЩЕСТВЕ
МАНУКЯН А.Л.

В статье обсуждаются причины возникновения проблем семейного воспитания в меняющемся обществе и возможные пути их решения, обусловленные глобальными экономическими процессами.

SUMMARY
PECULIARITIES OF FAMILY UPBRINGING IN A CHANGING SOCIETY
MANUKYAN A.L.

The article discusses the causes of problems in family upbringing in a changing society that is shaped by global economic processes. Possible solutions to these problems are discussed.